կին իշխանի կողմից մի գրութիւն և ընծայ տանելով հայրապետին և նամակներ Յովսէփ արքեպիսկոպոսից, Ց. Լ. Լազարեւից և Մանուչարեանից։ Սակայն կաթողիկոսին այս գործում առաջին քայլն անել տալու փորձը յաջողութիւն չգտաւ. Ղուկասն զգոյշ վերաբերուեցաւ Պետերբուրգի առաջարկութեան և Էջմիածնի վրայ նոր ազէտներ կուտակելու վտանգից վախենալով, խոյս տուեց որև է մասնակցութիւնից։ Կաթողիկոսը գօկտոր Յակոբի Էջմիածին գալը Յովսէփ սրբազանին յայտնելիս՝ ի միջի այլոց գրում էր 17 յունվարի 1783 ամի, թէ «Եւ զոր ինչ ի բերան ասելին էր, զամենայն ծանոյց և իմացաք։ Մեք ևս գրեցաք չնորհակալութեամբ զպատասխանի մեծի իշխանին և զմերոցն։ Եւ զոր ինչ վայել էր, ընդ իւրն խօսեցեալ և ըստ արժանւոյն չահեալ, ուղևորեցաք աստի, տուեալ նմա և զայս թուղթ։ Որում, թէ դէպ լիցի զքեզ տեսանել, գիտելոց ես զինչ խօսելն մեր ըստ հարկի և ըստ ձեռնտուութեան ներկայիս»։ «Ինչ որ գօկտորը բերանացի ասելու էր մեզ՝ ասաց, և լիովին իմացանք, և ամեն բան ինչ որ պէտք էր, խօսեցինք... Երբ տեսնես նրան, կիմանաս, թէ ի՞նչ ասացինք նրան, ի նկատի առնելով ներկայ ժամանակիս պահանջները»։

Ղուկաս կաթողիկոսի այդ զգուշաւոր ընթացքը մի այնպիսի խնդրի վերաբերմամբ, որ ոգևորում էր Ռուսիայում և Հնդկաստանում բնակուող, ուստի և Հայաստանի իսկական կացութեան անտեղեակ հայերին, դժգոհութիւն պատճառեց Նրանց. Նրանք, կարծիք, սկսան կշտամբել հայրապետին, ասե-

---

մնաց այնտեղ և մեծ ափսոսանքով մեկնեցաւ «այդ՝ գուցէ աշխարհի ամենալաւ անկիւնից». Նա ստիպուած էր աճապարել հետևելու վրաց Հերակլ թագաւորի հրաւէրին, որի մօտ և մեկ ու կէս տարի մնաց Թիֆլիզում, իբրև արքայի բժիշկ։ Բէյնէգսի կենսագրի ասելով՝ թագաւորն իւր խոստումները չկատարեց, և այդ եղաւ պատճառ Բէյնէգսի հեռանալուն Թիֆլիզից։ Բէյնէգսը գնաց Պետերբուրգ և մի տեղեկագիր տուաւ Պոտեմկին իշխանին Վրաստանի գրութեան մասին և մերձաւոր մասնակցութիւն ունեցաւ Վրաստանը Ռուսիայի հովանաւորութեան ներքոյ ընդունելու համար եղած բանակցութիւնների մէջ։ Նրան վերադարձրին Վրաստան Ռուսիայի ներկայացուցչի պաշտօնով։ 1793 թ. մի քաղաքագիտական խաստ ունեցող յանձնարարութիւն տրուեցաւ Նրան առ Ղուկաս կաթողիկոսը։ Բէյնէգսը այդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ կրկին գնաց Պետերբուրգ։ Պոտեմկին իշխանը հաւատարմութիւն էր ընծայում Նրան և տաճկական պատերազմի ժամանակ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան